

# ՀԱՅՐԵՆԻ ԱՂՔԻՐ



ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՁԵՆԱԿ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵՁՈՒԻ  
ԵՒ ԲԱՑԱՏԵԱԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՔՏԵԱՆ  
ՄԱՐՈ ՓԱԼԱՅՏԵԱՆ-ՔԻՐՔՏԵԱՆ

ԳԻՐԲ 1  
ՅԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՈՒԹԻՒՆ  
ՆՈՐ ՁԵԿՒԴՈՐՈՒՄ



## Ա.- ԿԵՆԴԱՆԻՆԵՐ՝ ՄԵՐ ՇՈՒՐՁ...

1. Արամ Հայկազ. **ՀԱՆՑԻՆ ՊԱՏԻԺԸ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 10
2. Չարեհ Խրախունի. **ՅՈՒՌՈՒԹՔ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 16
3. Առօրեայ Հայերէն (ա.) - **ՄԱՐԴԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 19
4. Բաֆֆի. **ՈՐՍԻ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 22
5. Կարօ Սասունի. **ԼԷՅԼԱՆՍ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 28
6. Նշան Պէշիկթաշլեան. **ԱՂՈՒԷՍԻՆ ՔԻԹԸ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 33
7. Գանիէլ Վարուժան. **ԱՆԴԱՊԱՀԸ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 37
8. Առօրեայ Հայերէն (բ.) - **ԿԵՆՅԱՂ... ԲՆԱԿՈՒԹԻՒՆ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 41



## Բ.- ՅԵՐՈՍԱԿԱՆ...

9. Վախտանգ Անանեան. **ԻՆՉՊԷՍ ՆԱԽԱՍԱՐԴԸ...**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 46
10. Արմեն Գարո. **ԿՐԵՏԱՅԻ ՆԱԻՎԱՐԸ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 51
11. Առօրեայ Հայերէն (գ.) - **ԳՈՐԾԻՔՆԵՐ... ՄԵՔԵՆԱՆԵՐ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 56
12. Լեւոն Շանթ. **ԳԻՇԵՐԱՊԱՀԸ** 60
13. Աւետիս Ահարոնեան. **ՎԱԶՐԻԿ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 63
14. Պարոյր Սեւակ. **ՀԱՅԱՍՏԱՆ** 69
15. Էրնրսթ Հեմինկուէյ. **ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԾՈՎԸ** 72
16. Յովհաննէս Թումանեան. **ԳԱԻԹԻ ԵՒ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՍԱՐՏԸ**  
- Լեզուական-Գործնական Աշխատանք 77



17. Մկրտիչ Մարկոսեան. <b>ՊՈԶԱՆԵՆՑ Կ'ԵՐԹԱՆՔ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	82
18. Ալեոիք Իսահակեան.- <b>ԱՐԱՐԱՏԻ ԾԵՐ ԳՄԲԷԹԻՆ...</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	87
19. Առօրեայ Հայերէն (դ.) - <b>ԱՌՈՂՋ ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	89
20. Վախտանգ Անանեան. <b>ԻՄ ՉԱՄԲԱՐԸ</b>	93
21. Մելքոն Կիրճեան. <b>ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ՏՈՒՆԴԱՐՉԸ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	96
22. Գուրգէն Մահարի. <b>ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	102
23. Բենիամին Նուրիկեան. <b>ՄԱՇԱԾ ԱԻԵԼ</b>	106
24. Յակոբ Մնձուրի. <b>ԲԱՆԱՍՏԵՂԾԸ</b>	111



**Դ.- ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ**

25. Սիմոն Վրացեան. <b>ԳԷՊԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	116
26. Անդրանիկ Ծառուկեան. <b>ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԳԻԿ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	120
27. Արամ Հայկազ. <b>ՄԱՆՉՍ Կ'ԵՐԹԱՅ ՏՈՒՆԷՆ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	126
28. Մ. Իշխան. <b>ՄԱՆՈՒԿԻ ԺՊԻՏ ԵՒ ԱՐՅՈՒՆՔ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	132
29. Առօրեայ Հայերէն (ե.) - <b>ՍՇԱԿՈՅԹ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	137
30. Վահան Տէրեան. <b>ԻԼԻԿԸ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	141
31. Համաստեղ. <b>ՊԱՉԻԿԸ</b> - Լեզուական-Գործնական Աշխատանք	145
32. Անթուան տը Սէնթ-Էքսիւփերի. <b>ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԻՆ ՀԵՏ</b>  <b>- ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ՅԵՏ</b>	150  <b>157</b>

Անասուններ՝ մարդու աչքով դիտուած, շուրջ 15 000 տարի առաջ  
(Լասքոյի քարայրներ, Ֆրանսա)



### Առաջին Բնաբան ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՄԵՐ ՇՈՒՐՋ

Անասուններ՝ մեր կողքին, անասուններ՝ մեր շուրջ - տունը, փողոցը, ազատ բնութեան գիրկը, հողին վրայ, օդին մէջ, ջուրին մէջ...

Գրեթէ ընտանիքի անդամ ընտանի անասնիկներէն՝ մինչեւ վայրի գազանները, մանր միջատներէն՝ հսկայ ծովային հրէշները, օգտակարն ու վնասակարը, անոնք կը շրջապատեն մարդը - զայն շրջապատած են ամենահին ժամանակներէ իվեր:

Մարդը կ'իշխէ իր շրջապատի արարածներուն:

Բայց ինք ալ մաս չի՞ կազմեր անոնց աշխարհին՝ կարգ մը յատկութիւններով - ծնունդ, մահ, կեանքի հիմնական ձեւեր...

Հոս՝ Մարդ-Կենդանի բարեկամութեան՝ պատմութիւններ պիտի կարդանք աւելի,

նոյնիսկ եթէ գիտենք, որ Մարդը միշտ ճերմակերես չի ներկայանար կենդանիներու հետ իր կապին մէջ. յաճախ իր կարգին՝ ան կ'երեւի իբր «վնասակար կենդանի» մը:

Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս...

Այդ մասին՝ կը տեսնենք մեր հետեւող դասագիրքերուն մէջ:



# ՀԱՆՑԻՆ ՊԱՏԻԺԸ...

# 1

*Ամերիկահայ գրագետ Արամ Չայկազ հոսս մեզի կը պատմէ իրական, առօրեայ դէպքեր: Անոնց գլխաւոր հերոսներն են իր մանչը, թաղի ընկերները, եւ մանաւանդ իրենց շունը՝ Յանցը:*

*Շնորհիւ իր բարութեան, բնականութեան եւ սրամտութեան, պատմողը կը յաջողի իրական, տպաւորիչ գոյներով ներկայացնել կեանքն ու ապրողները - չափահաս մարդ, մանուկ թէ անասուն: Այս վերջին կարգէն՝ հոս, պատմուածքի գործող մարդ-տիպարներու կողքին, որքա՞ն ուշագրաւ է ընտանիքին շունը՝ Յանցը...*

1. Շաբթուան մը պաղէն-անձրեւէն ետք, անամպ երկինքին վրայ կը շողայ արեւը:  
Ծառերուն բողբոջները<sup>1</sup> պայթած են. գրեթէ կը տեսնես տերեւներուն մեծնալը: Գիշերուան լռութեան մէջ, կարծես կը լսես վեր խուժող աւիշին<sup>2</sup> աղմուկը:

Տղաս կիսամերկ փողոց ինկած էր: Մայրը մտահոգ էր.  
- Պիտի պաղի՞ հիւանդանայ,- գանգատեցաւ լացկամած,- հայրն ես. բան մը չընե՞ս:  
- Դուն ալ մայրն ես. դո՞ւն ի՞նչ ըրիր,- ըսի ես կեղծ լռջութեամբ.- յետոյ՝ ի՞նչ կ'ըլլայ որ... անոնց արիւնը տաք է, արեւը՝ ջերմ, դիւրին-դիւրին պաղ չեն առներ: Բայց եթէ կ'ուզես՝ կ'երթամ ստուգելու, թէ ի՞նչ բանի են<sup>3</sup>:

2. Դեռ դուռէն չէի ելած՝ տղաս ու Հանցը հեւալով ներս ինկան:  
- Փա՛, ըսա՛ք<sup>4</sup> շինենք կոր. մաման ո՞ր է:  
- Ներսն է. ի՞նչ ըսա՛ք, ի՞նչ բան. շո՞ւնչ առ:  
- Կենկով<sup>5</sup> ըսա՛ք շինենք կոր. մեծ կրակ մը վառեցիմք Քանը-լիին բակը. Դեքին հաթրակները բերելու գնաց, ես փաթաթեաները պիտի տանիմ՝ մոխիրի մէջ խորովենք. Շորթին գնաց...  
- Անգամ մը հո՞ւ եկուր,- տղուս խանդավառութեան վրայ ջուր քափեց մայրը՝ ամուր ձեռքով մը անոր վիզէն բռնած իրեն քա-

## ԲԱՌԱՄԹԵՐՔ

Փնտռէ՛ իմաստը.-  
- լացկամած - ողորկ  
- երամ - սրորիկ

## ՄԱՍ ԱՌ ՄԱՍ

1ա. Անամպ, կապոյտ եւ կիսամերկ ածականները ի՞նչ օղ ու եղանակ կը գծեն:

1բ. Բոյսերու մասին ո՞ր չափազանցութիւնները կը գործածուին. ի՞նչը զգալի դարձնելու կը ծառայեն:

2ա. Կազմէ՛ այս Մասի անգլերէն բառերուն ցանկը. ճշդէ՛ իմաստները:

2բ. Ընդգծէ՛ երեք ըսելու ձեւեր (հայերէն), որոնք աւելի

շելով.- դուն կրակի քով գործ չունիս: Եթէ *հաթարակի թոսք* կ'ուզես, ես կը շինեմ քեզի համար: Դեռ վիզիդ վերքը նոր աղէկցուցինք:

- Օ՛, մա՛, *փլի՛զ*, մա՛, *սատ զգուս կ'ըլլամ*, *փլի՛զ*, աղուոր մամասա. մէկ անգամ, *փլի՛ի՛ի՛զ*...

Ես աչքով նշան ըրի, որ տեղի տայ՞:

- Աչքով-ունքով՞ մի՛ ըներ,- նեղուեցաւ ան,- ի՛նչ կ'ուզէք՝ ըրէ՛ք. բայց եթէ գլխուն փորձանք մը գայ՝ ինձի մի՛ վազէք: Ես յոգներ եմ հիւանդ ու վերք նայելէ:

Բայց հաշտութեան ծիածանը երեւցաւ<sup>8</sup>. մայր ու տղայ համբուրուեցան: Տիկինը<sup>9</sup> իր ձեռքով գետնախնձորները տոպրակը դրաւ, տուաւ տղուն:

- Կրակին մի՛ մօտենար. միսն ու փաթաթէսը լա՛ւ եփեցէք, հում չուտէ՛ք. հիւանդ կ'ըլլաք:

- Այո՛, մամա,- ամբողջ գորով<sup>10</sup> ու ժպիտ էր:

3. Երբ տղաս, հոգիին մէջ ամբողջ արեւ մը բռնած<sup>11</sup>, ճամբայ ելաւ, Հանցը, մեր շունը, կլոր մարմինը օրօրելով, ինկաւ ետեւէն: Արեւը կը շողար իր ողորկ մուշտակին վրայ, որ արծաթի պէս կը փայլփլէր:

- Վերջերս աս շունը շատ կը կերակրեն, շա՛տ գիրուկցեր է, ուտելիքին մէկ ժու՛նը կտրելու է<sup>12</sup>, - ըսի ես ինձի, ու դանդաղ, անփոյթ քայլերով ուղղուեցայ դէպի տղոց զքօսատեղին:

4. Նոր ծաղկած վայրի կեռասենիին տակ, տղաքը հաւաքեր էին իրենց պաշարը, եւ կը սպասէին կրակին հասնելուն:<sup>13</sup> Երջանիկ էին ու անհանդարտ՝ ճնճողուկներու երամի մը պէս:

Միայն Հանցը տխուր էր: Ականջները կախ, դէմքը ամպոտ, կեցեր էր ծառի շուքին: Փորձեր էր հաթասկերը հոտուրտալ. զգայուն, բարակ քիթը մօտեցուցեր էր որ հոտուրտայ՝ միայն մէկ անգամ, բայց տղաքը տեսեր էին, կասկածեր, յանդիմաներ, ու վիզէն բռնած՝ մէկդի նետեր էին...

- Ասոնք քուկդ չեն, Հանց. անդի՛ն գնա:

Քովը գացի, շոյեցի: Պոչը շարժեց, ըսելու պէս՝ թէ դէմս բան չունէր: Բայց հոգին նեղ էր:

- Տղա՛ք, զգո՛ւշ. ձեռք-ոտք չայրէ՛ք, դրացիներուն տունը կրակ չձգէ՛ք,- ազդարարեցի, ու երգ մը մոմնալով՝ դարձայ տուն:

բնական, իրական  
կը դարձնեն  
խօսակցութիւնը...

3ա. «Հանց»ին շունը ըլլալը մեզի յայտնի՞ էր Մաս Չին մէջ. հոս՝ ի՞նչ ձեռով կ'ըսուի. ատելի բնական է՞ այսպէս. ինչո՞ւ:

3բ. Հանցին մասին հոս ինչե՞ր կ'ըսէ պատմողը: Մեզ «կը պատրաստէ՞» պատմութեան շարունակութեան (պատասխանէ՞ մինչեւ այս մասին ծայրը երթալէ ետք...):

4. Այս մասը ի՞նչ հակադրութեան վրայ կազմուած է. ո՞վ ուրախ է, ո՞վ տխուր: Բացատրէ՛:





«Բայց հոգին նեղ էր...»

5. Տասը րոպե չէր անցած՝ տղաս ու Հանցը խոհանոց մտան: Տղուս վրայ ակնարկ մը՝ եւ հասկցայ, որ չարաղէտ, ահաւոր բան մը պատահած էր: Դէմքը մուր, հող, քրտինք էր. վարի շրթունքը կը դողար. շապիկին մէկ թելը չկար: Եթէ գիրուկ, կլոր ծնօտը սեղմած չըլլար այոքան ամուր, անպայման պիտի լար:

- Հո՛ս եկուր տեսնեմ, տղա՛ս, ի՞նչ պատահեցաւ,- ըսի, կեղծ հանդարտութեամբ,- քո՛վս եկուր տեսնեմ. ի՞նչ է եղածը...

Շրթունքները քիչ մը եւս դողացին ու լոտ՝ գլուխը դարձուց դէպի շունը.

- Հանցը:
- Հա՞նցը...,- կրկնեցի եւ հարցական:
- Հաքրակները կերաւ:
- Չեփա՞ծ...
- Անոր համար՝ ի՞նչ կարելութիւն... Չենք գիտեր ե՛րբ կերաւ. մենք ապուրով եւ փաթաթեմներով զբաղած էինք, մէկ ալ տեսնենք՝ Հանցը կայ, հաքրակները չկան:
- Ուտելը տեսա՞ք:
- Չէ՛, բայց երբ բերանը հոտուրտացինք՝ բերանէն հաքրակի հոտ կու գար: Յետոյ՝ ուրիշ մէկը չկար հոն իրմէ գատ...

- Ուէ՛լ,- ըսի եւ ժպտելով,- ուրիշ անգամ նորէն կը շինէք. այն ատեն Հանցը հետդ չես տանիր: Իբր պատիժ՝ կը կապենք հոս...

5ա. Որո՞ւն համար իսկապէ՛ս չարաղէտ եւ ահաւոր ըլլալու է պատահածը:

5բ. Իսկ հա՞յրը... Քիչ առաջուան պէս անհոգ, անտարբե՞ր է ան հիմա («կեղծ հանդարտութեամբ» արտայայտութիւնը ի՞նչ ըսել կ'ուզէ իր մասին):

5գ. Հօր հարցումները հաքրակներու մասին՝ ինչո՞ւ խնդացնող են: Տղուն պատասխանները՝ ինչո՞ւ իրաւացի:

6. Յուսահատ՝ գլուխը շարժեց ժխտական:  
- Ինչո՞ւ... ի՞նչ եղաւ որ...  
- Երբ տեսանք՝ *հաքրակները* չկան, վե՛ճ ունեցանք: «Չես գիտեր՝ ինչո՞ւ կը պահէք,- ըսին.- վերջապէս գերմանացի շուն է. ի՞նչ կը սպասես. անո՛նն իսկ գերմանական է. դեռ աղէկ որ Հիթլեր կամ Կէօրինկ<sup>14</sup> չէ... Ամերիկա կ'ապրի, ու գողութիւն կ'ընէ»: Պիտի ծեծէին. կռուեցանք: *Փաթաթէտի* բաժինս առի՛ եկայ:  
Շապիկին պոչով բռնած էր գետնախնձոր մը, այրած կեղեւով ու քերէս հում միջուկով...  
Հանգստացուցի զինք, ու դրկեցի լուացուելու:

7. Երբ վերադարձաւ՝ ձեռքս դրի ուսին.  
- Հանցը պիտի պատժենք որկրամոլութեան<sup>15</sup> համար,- ըսի.- այս իրիկուն ու վաղը՝ ճաշ չկայ: Արդէն շատ գիրցած է. թո՛ղ հասկնայ՝ ինչ է եղեր գողութիւն ընելը: Անպիտանը...  
Օրը շուտ անցաւ. ձայնասփիռէն գիշերուան վերջին լուրերը լսելէ ետք՝ պառկեցանք:

8. - Արա՛մ, ելի՛ր, տունը գող կայ,- փսփսուքով կէս գիշերին արթնցուց զիս կինս:  
- Ի՞նչ,- ցատկեցի ես տեղէս,- գո՞ղ կայ... Հապա շունը չհաչե՛ց...:  
- Անպատճառ անօթի ձգելուդ համար քէն ըրած է... Լսէ՛, խոհանոցը մէկը կայ:  
Սիրտս կը բաբախէր. ծունկերս կը դողային:  
«Գողերը կիները չեն սպաններ, դո՛ւն գնա նայելու», պիտի ըսէի, բայց ամչցայ: Անգամ մը-երկու բարձր հագացի՝ գողը զգուշացնելու համար: Նրբանցքի լոյսին կոճակը դարձուցի, եւ «Հայր մեր որ յերկինս ես» ըսելով ուղղուեցայ խոհանոց: Աչքս մօտեցուցի դրան ճեղքին:

9. Սառնարանին դէմ, կաթի շիշը ձեռքը, գիշերանոցով գետին նստած էր տղաս. քովը՝ Հանցը, քիթը՝ կաթով լեցուն իր կապոյտ պնակին մէջ, մեծադմուկ կը լափէր: Տղաս, գիրուկ ճերմակ ձեռքը դրած անոր մէջքին, վրան հակած՝ գորովալի խօսքեր կը փսփսար ականջին.  
- Մա՛տ անօթի էիր, հա՞, վա՛խ եմ ըսեր, քեզ պատժեց չա՛ր փափան: Բայց դուն ալ գողութիւն ընելու չէիր...: Կերա՞ր, ուրիշ

6ա. Յիշելով՝ որ դէպքը կը պատահի 1939-1945 պատերազմի օրերուն, գտի՛ր եւ բացատրէ՛, թէ տղաքը ի՞նչ շեշտով ըսած են Հիթլեր եւ Կէօրինկ անունները:

6բ. Տղան համաձա՞յն է. ի՞նչ մեծ փաստ տուած է՝ որ կը սիրէ իր շունը:

8. Պատմողը ինչպէ՞ս մեզի զգալի կ'ընէ իր վախը: Լո՞ւրջ, թէ՞ խնդալով կը պատմէ այդ մասին: Եւ որո՞ւն վրայ խնդալով...

9. Չարմացա՞ր, երբ հասկցար «գող»ին ո՛վ ըլլալը... Ինչո՞ւ:

### ԸՆԳՀԱՆՈՒՐ

1. Դասէ՛ն՝ հանէ՛ հօր նկարագիրը, քննելով խօսքերը, արարքները:

կ'ուզե՞ս. սպասե՛. անդի՛ն, մի՛ լզեր քիթս-բերանս. տեսա՞ր, թա-  
փեցի՞ր. սո՛ւս, ձայն մի՛ հաներ, հիմա կ'արթննայ փափաս...

10. Ուսիս վրայեն մեկը կը շնչէր. գլուխս դարձնելով տեսայ,  
որ «մաման» էր. ուշանալուս՝ եկեր էր զիս փնտռելու:

Բան չըսինք իրարու. ձեռք ձեռքի, մութին մէջ, վերադարձանք  
մեր անկողիներու ջերմութեան:

1. Բողբոջ.- ճիւղի վրայի ծիլ:
2. Աւիշ.- Բոյսին «արիւն»ը:
3. Ի՛նչ բանի են.- Ի՛նչ գործի վրայ են:
4. Բոսք.- Խորոված (անգլ.):
5. Կէնկ.- Խումբ (անգլ.):
6. Տեղի տալ.- Ետ քայլ ընել, զիջիլ:
7. Աչքով-ունքով ընել.- Աչքով-յօնքով նշաններ ընել:
8. Հաշտութիւն եղաւ:
9. «Տիկին»՝ փոխանակ ըսելու «կինս» (կատակ):
10. Գորով.- Սէր:
11. Հոգիին մէջ արեւ մը.- Երջանիկ:
12. Մէկ ժամը կտրել.- Դաշէ մը գրկել:
13. Կրակիկն հասնիլը.- Տաքնալը, կարմրիլը:
14. Հիթիլ էւ Կտօրիկնկ.- Գերման ղեկավարներ (Միացեալ Նահանգներ եւ Գերմանիա պատերազմի մէջ էին):
15. Որկրամուտիւն.- Շատակերութիւն:

2. Դասը կը նմանի  
քատերակի - ինչո՞վ:  
- Չայն բաժնէ՛ ՎԵՅ  
տեսարանի.-  
Մաս 1, Մասեր 2-3,  
Մաս 4, Մասեր 5-6-7,  
Մաս 8 եւ Մաս 9:  
Դշդէ՛ ամէն մէկուն  
վայրը, անձերը՝ խօսող  
կամ ոչ, մթնոլորտը:

- Բեմի վրայ  
ներկայացուցէ՞ք  
այսպէս  
պատրաստուած  
քատերակը:

### Արամ Հայկազ (Չէքեմեան, 1900-1986)



Ծնած է արեւմտեան Հայաստան, Շապին-Գարահիսար քաղաք: Դեռ պա-  
տանի՝ կը կորսնցնէ ընտանիքը 1915ի ցեղասպանութեան: Ինք կ'ազատի  
բախտով, քիւրտերու քով պահուրտելով չորս տարի:

Պատերազմի աւարտին՝ կը յաջողի հասնիլ Պոլիս, անկէ՝ Ամերիկա: Կեան-  
քին մնացեալ մասը կ'ապրի Միաց. Նահանգներ:

Կանուխէն՝ սկսած է գրել պատմուածքներ, մեծ մասամբ իր կեանքէն - թէ՛  
մանկութեան-պատանութեան յիշատակներէն, եւ թէ՛ Ամերիկայի առօրեայէն:

Գլխաւոր գործերէն են՝ «Ցեղին Չայնը», «Չորս Տարի Քիւրտիստանի  
Լեռներուն մէջ», «Չորս Աշխարհ», «Պանդոկ» ու «Ապրէ՞ք, Երեխէք» հատորները:

### ԼԵԶՈՒԱԿԱՆ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ



#### ԲԱՌ-ԱՄԹԵՐՔ

1. Գտի՛ր ամէն մէկ բառի երկու արմատները. ինչպէ՞ս կը կոչենք այսպիսի բառեր.-

- խանդավառ - զբօսատեղի - որկրամուտ - ձայնասփիւռ - նրբանցք

- Գտած տասը արմատներովդ կազմե՛ մէկական բարդ կամ ածանցաւոր նոր բառ:

2. Բայերուն իմաստը բերանացի բացատրե՛, յետոյ գործածե՛ զանոնք՝ ամէն մէկը յարմար  
նախադասութեան մէջ.-

- խորովել - տապկել - խաշել - խարկել - եռացնել - թխել

ա. Կաթը տաքցո՞ւր, բայց մի՛ ..... :

բ. Միսը կրակին վրայ .....լե առաջ պատրաստեցե՞ք աղցանը:

գ. Որոշ երկիրներու մէջ, գիւղացիները թիթեղի վրայ բարակ հաց կը ..... :

դ. Ձուկը խորովելո՞ւ համար կ'առնէք, թե՞ ձէթի մէջ .....լու:

ե. Հաւկիթները պիտի տապկե՞ս, թե՞ ջուրի մէջ պիտի ..... :

զ. Սոխը .....լու ատեն ուշադիր եղիր. չայրես:

### **3. Բացատրէ՛. յետոյ գործածէ՛ նախադասութիւններու մէջ - բերանացի.-**

- կողիկ - աղցան - խորոված - տապակ - սան - կաթսայ

### **4. Արտագրէ՛ եւ դէմը դի՛ր հոմանիշ արտայայտութիւնը՝ ընտրելով վարէն.-**

- Պաղ չեն առներ - Անոնց արիւնը տաք է - Ուշադրութենէն չվրիպեցաւ - Վրան (պաղ) ջուր թափեց

- Պզտիկ եւ կայտառ են - Չեն մսիր - Յուսախար ըրաւ - Անդրադարձաւ, նկատեց

## **ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ**

### **5. Ընտրէ՛ յարմար յետադրութիւնը.-** *օ դէմ օ հանդէպ օ համար օ մասին.*

ա. Մանչուկս մեծ սէր ունի իր շան ..... :

բ. Երեխաները զանազան երշիկներու ..... հոգի կուտան:

գ. Ինչո՞ւ իմ տեսակէտիս ..... դիրք ճշդեցիր. չէ՞ որ համաձայն էիր:

դ. Այս ընկերոջդ ..... ի՞նչ զգացում ունիս, եւ ի՞նչ կը մտածես իր ..... :

ե. Շուշիկը ձեր մօտ որեւէ լուր ձգե՞ց ինձի ..... Աշտին գալուն ..... :

## **ՊԱՐԲԵՐՈՒԹԵՆԷ ՄԻՆՉԵՒ ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ**

### **6. Խօսակցութիւն մը.-**

- Վերակարդա՞ դասի մաս 5ը: Քանի՞ հոգիի միջեւ է խօսակցութիւնը: Ի՞նչ են տրամադրութիւնները, մթնոլորտը:

- Գրէ՛ 10-15 տողոնց խօսակցութիւն մը՝ երկու անձերու միջեւ: Մէկը միւսին կը հաղորդէ մտահոգիչ կամ ծանր լուր մը, յուզումով եւ կմկմալով: Մի՛ մոռնար խօսքերու կողքին տալու շարժումները: Մաս 5ը թո՛ղ օգնէ քեզի, բայց փորձէ՛ ինքնատիպ բան մը գրել:

### **7. Պատահար մը՝ պատմուած.-**

- Ջարգացո՞ւր վերի աշխատանքը: Սկիզբը պատմէ՛ խօսակիցին յայտնուելիք դէպքը, ըրէ՛ անհրաժեշտ նկարագրութիւնները, ներկայացո՞ւր հերոսներու զգացումները, մտածումները: Յետոյ «տեղափոխէ՛» վերը պատրաստած խօսակցութիւնը:

- Կրնաս նաեւ հակառակը ընել. սկսիլ պատահարի պատում-խօսակցութենէն, եւ յետո՛յ ներկայացնել դէպքը՝ ետ-դարձով: Հերոսներէդ մէկը կրնաս անշուշտ դուն ինքդ ըլլալ...



# ՅՈՒՌՈՒԹՔ 2

*Բանաստեղծ Ջարեհ Խրախունցի հոս մեզի կը ներկայացնէ ուրիշ ընտանի կենդանի մը, որ համակրելի ու սիրելի է - բայց նախորդ դասի հանցէն շատ տարբեր իմաստով:*

*Շնորհալի ոճով տալէ ետք իր սիրած ընտանի կենդանիին երեւոյթն ու շարժումները, ան իր գուրգուրանքը կը յայտնէ ինքնատիպ կատակ-փափաքի մը ձեւով, որ պիտի հասկնանք ու բացատրենք...:*

1.  
Ածուխի պէս սեւափայլ  
Եւ մուշտակի պէս կակուղ,  
Սատանայի պէս ճապուկ<sup>1</sup>,  
Ստուերի չափ անշշուկ.  
Գլխուն գոյգ մը լուսարձակ,  
Ետին ծոպ մը օղապար<sup>2</sup>,  
Սրածայր ու թրթրռուն:

2.  
Թաթիկ-թաթիկ կը քալէ,  
Օրօր-շորոր կը նազէ<sup>3</sup>.  
Մէկ աջ, մէկ ձախ կը նայի.  
Մէկէն կուշտին<sup>4</sup> կը պառկի.  
Չախ ականջը կը քերէ  
Ոտքը զանգի մուրճ մ'իբրեւ<sup>5</sup>...  
Կը յօրանջէ կասկարմիր.  
Փորիկն երկար կը լըզէ  
Վարդի թերթով մը կարծես...:  
Յանկարծ ինծի կը նայի,  
Վիզը տնկած ու անշարժ՝  
Պիշ-պիշ ինծի կը նայի...

## ԲԱՆԱՄԹԵՐՔ

Փնտռէ՛ իմաստը.-  
- ծոպ - յուռուքք - պիշ-պիշ  
- սեւաթոյր

## ՄԱՍ ԱՌ ՄԱՍ

1ա. Մարմնի ո՞ր մասերուն համար ըսուած են՝ լուսարձակ եւ օղապար ծոպ:

1բ. Ածականներէն որո՞նք կապ ունին տեսնելու, որո՞նք՝ լսելու, որո՞նք՝ շօշափելու. որո՞նք՝ շարժումի հետ:

2ա. Շարժումներ նկարող այս մասը կառուցուած է եօթը բայերով. որո՞նք են:

2բ. Ո՞ր բառերը (գոյական, որակական...) կը նշեն շնորհալիութիւն, «անուշիկութիւն». որո՞նք՝ արթնութիւն:

3.  
 Ես քու աչո՛ւկըդ սիրեմ  
 Ու թաւիշը փորհկիդ...  
 Կախարդ ըլլամ՝ քեզ դիւթեմ՞,  
 Փոքրացրնեմ ափիս մէջ  
 Եւ յուռութքի վերածեմ.-  
 Փայլուն սաթէ՞ սեւաթոյր,  
 Աչուկներըդ տպագէ՞  
 Քիթիդ ծայրը յակիւնթէ՞,  
 Պոչիկդ ալ՝ միշտ այդպէս վեր...

1. Ճապուկ.- Ճկուն, ճարպիկ: 2. Օղապար.- Օղին մէջ պարող:  
 3. Նագել.- Նագի, պշրանքի շարժումներ ընել:  
 4. Կուշտ.- Կող: 5. Մ'իբրեւ.- Դրուած է *մը իբրեւ* բառերուն տեղ:  
 6. Դիւթել.- Կախարդել:  
 7. Սաթ.- Քարացած խեժ մը՝ զարդեր եւ համրիչ շինելու ծառայող:  
 8. Տպագ.- Թանկագին քար մը՝ կանանչի մօտ գոյնով:  
 9. Յակիւնթ.- Կարմրագոյն թանկագին քար:

3. *Աչուկ, փորհկ* ունին նուագական՝ «պգտիկցնող» մասնիկ. անիկա ի՞նչ զգացում կ'արտայայտէ (տե՛ս ընկերացող բայը):

3բ. Կենդանիին պգտիկ-անուշիկ ըլլալը ի՞նչ «փափաք» կ'արթնցնէ իր տիրոջ մէջ:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ**

1. Հաւաքէ՛ բառերը, որոնք «հերոս»ը կը նկարագրեն իբր զարդ մը, իր մը:  
 2. Յետոյ հաւաքէ՛ այն բառերը, որոնք զայն կը ներկայացնեն իբր սպրող, շարժուն էակ:

**ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**



Շեշտ-եղանակը՝ քնքուշ, ու նոյն ատեն՝ կայտառ:  
 Մասեր 1 եւ 2ի մէջ, եղանակի նրբութիւնները տալ ածականներու (սեւափայլ, կակուղ) եւ բայերու իմաստին համաձայն: Մաս 2ի վերջին տողերուն՝ նկատել եղանակի յանկարծական փոփոխութիւնը:  
 Մաս 3ի եղանակը պէտք է արտայայտէ բանաստեղծին «խոստովանած» զգացումը:  
 Կշռոյթը շատ արագ չէ, ոչ ալ անշուշտ՝ դանդաղ. բայց մանաւանդ միօրինակ չէ, տեղ-տեղ կ'արագանայ՝ ըստ իմաստի. այլ տեղեր՝ բաւական կը դանդաղի, երբեմն մէկ տողէն միւսը: Ուշադիր միջակետերուն եւ բազմակետերուն. անոնք ստորակետերէն աւելի երկար դադար կը պահանջեն:

**Ջարեհ Խրախունի (Արթօ Ճիւմպիւշեան, ծնած՝ 1926ին)**



*Բանաստեղծ, կ'ապրի Պոլիս, Թուրքիա: Գրած է ու նախ հրատարակուած է թերթերու մէջ, եւ յետոյ՝ իր գիրքերով՝ 1950-60 տարիներէն սկսեալ - «Քար-Կաթիլներ», «Ես եւ Ուրիշներ», «Լուսնապարտէզ», «Տօնակարգ», «Ստուեր եւ Արձագանգ», «Սրտի Խօսք», եւ ուրիշ հատորներ:*  
*Ջ. Խրախունի գրած է բանաստեղծութիւններ ամենապարզ առարկաներու մասին. ան շօշափած է նաեւ կեանքի ու մարդու ամենալուրջ հարցերը: Այս բոլորը՝ պարզութեամբ, կարծես միշտ թեթեւ կատակով համեմուած, բայց նոյն ատեն լեցուն՝ մեծ լրջութեամբ մը:*



## ԼԵԶՈՒԱԿԱՆ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԲԱՌԱՄԹԵՐՔ

### 1. Նկարագրե՛ք բառարանի օգնութեամբ.-

- տպագ .....
- յակիմթ .....
- զմրուխտ .....
- շափիւղայ .....
- սուտակ .....

### 2. Բերանացի տո՛ւր զոյգ նոյնաձայն բառերէն ամէն մէկուն իմաստը.-

- ձախ - ցախ օ կուշտ - կուշտ օ ափ - ափ օ սուր - սուր օ սան - սան օ անձ - անց

- Վերի զոյգերէն ամէն մէկը գործածե՛ միասին՝ մէկ նախադասութեան մէջ.-

*Օրինակ՝ Ցախի դէզը ետեւէս կը քաշէի՝ ձախ ձեռքով:*

### 3. Ամէն մէկ բայ գործածե՛ք իրեն յարմար տեղը.- փայլիլ - պսպղալ - նշուել - փայլատակել

- Երեկոյ է: Երկինքը դեռ կը ..... մեղմ փայլքով, մինչ լուսաստղը արդէն կը ..... : Տուներուն մէջ տկար կը ..... առաջին լամբերը:

- Փոթորիկ էր. անընդհատ ..... ող ամպերէն որոտումները կը տարածուէին, ու կարկուտը կը տեղար բուռն թափով:

## ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ-ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

**4. Չափ եւ յանգ.-** Գտի՛ր տողերու վանկերուն թիւը. անիկա պահուած-յարգուած է ամբողջ կտորին մէջ, «Ա-ծու-իւի-պէս-սե-ւա-փայլ»էն մինչեւ «Պո-չիկդ-ալ-միշտ-այդ-պէս-վեր»:

- Ամէն տողի մէջ կայ պզտիկ դադար մը. ո՞ր է: Չայն նկատի առնելով՝ ինչպէ՞ս կը ներկայացնես տողի չափը - վերը գտած վանկերու թիւովդ. այսինքն՝

- ամէն մէկ տող՝ քանի՞ վանկ + քանի՞ վանկ:

- Իսկ յա՞նգը (վերջին վանկը). կը կրկնուի՞ տողէ տող, թէ՞ ազատ ձգուած է...

### 5. Տաղաչափական փորձ.-

- Նոյն կշռոյթով կամ չափով՝ դո՛ւն գրէ ոտանատր մը՝ նկարագրելով շնիկ մը կամ մտրուկ մը: Խրախունիին պէս՝ յանգը ձգէ՛ ազատ (տողերու վերջին վանկերը մի՛ յարմարցնէր իրարու):

### 6. Շարադրութիւն.-

- Գրէ՛ արձակ, սովորական շարադրութիւն մը՝ ընտանի անասունի մը մասին, որուն կապուած ես: Անասունին ֆիզիքական յատկութիւններուն հետ՝ տո՛ւր անոր արթնցուցած «բարեկամական» զգացումը, սէրը:

- Էջ 16ի նկարը կրնայ ներշնչել քեզ:



# ԱՌՕՐԵԱՅ ՀԱՅԵՐԷՆ - Ա ՄԱՐԻՆԻ, ՔԱՂԱՔՆԵՐ



## Ա ԽՍԱՊ ՔԱՐՏԵՍ



1. Լրացո՛ւր Հայաստանի եւ Արցախի քաղաքներու անունները (ճերմակ քառանկյունիները):
2. Քարտէսին կողքին, 23 նշաններ կը ներկայացնեն Հայաստանի տնտեսական, մշակութային եւ առօրեայ կեանքէն կարեւոր ճիւղեր: Հոն գտի՛ր հետեւեալ 5 ճիւղերուն համապատասխանող վայրերէն մի քանին. յետոյ բացատրե՛ այդ գործունէութեան ճիշդ ի՛նչ ըլլալը.
  - Շինանիւթեր - Պահածոներ - Ջրէլեկտրակայաններ - Աթոնակայան - Անասնապահութիւն
  - Քարտէսին վրայ գտի՛ր հետեւեալ ճիւղերուն համապատասխանող քանի մը վայրեր: Բացատրե՛ անոնց ճիշդ ի՛նչ ըլլալը. յետոյ գտի՛ր այդ վայրերուն անունները.-
  - Հանքային աղբիւր - Չմեռնային գրօսամարզութիւն - Ճարտարապետական յուշարձան:







## 2005. ՔԵՍԱՊ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԻԱՍՈՒՄՈՒՄԻ ՄԷՋ

### Գ Ընթերցում

Ամեն ամառ, Քեսապ իրեն կը կանչէ աշխարհի չորս կողմը ցրուած իր գաւազները. կը վերագտնուին հայրենի բնութիւնը, հարազատներ եւ աւանդութիւններ: Մշակութային եւ մարզական միութիւններ յաճախակի ժողովներ ու բանակումներ կը կազմակերպեն Քեսապի ընկերական, կենսութախ մթնոլորտին մէջ: Հալէպի հայութիւնը յատկապէս՝ կը գնահատէ Քեսապի այս յատկութիւնները, նաեւ զով, առողջարար օդը:

Քեսապի գաւառը նաեւ ի՛ր կեանքը ունի՝ իր տասնեակ հայաբնակ գիւղերով, մօտ երեք հարիւր ընտանիք: Կեանք մը՝ ամառը աշխուժ, ձմեռը՝ կծկուած:

Սեպտեմբերը խնձորաքաղի ամիսն է: Սնտուկներ կը լեցուին, կը շարուին բեռնակառքերու վրայ, կը տարուին շուկայ:

Կը հետեւի այգեկութիւնը: Խաղողը կը ճգնուի հնձանին մէջ. հիւրքը կաթսաներով կը դրուի եփելու. բուլակ կը պատրաստուի: Կիները լծուած են նաեւ ձմրան պաշարի ամբարման. լոլիկի եւ պղպեղի թանձրահիւթ, չորթան, հացահատիկներ, քացախ, գինի...

Վերջին տարիներէն՝ յիշատակներ ցուցահանդէսներն ու փառատօները:

Ցուցահանդէսները կը կազմակերպուին օգոստոսին, դպրոցներու սրահներուն մէջ - ձեռագործներու եւ ուրիշ արտադրութիւններու: Իսկ Քեսապի տօնավաճառը կը բացուի սեպտեմբերի սկիզբը, կազմակերպութեամբ տեղւոյն Օգնութեան Խաչին եւ երեք համայնքներու: Ներկայ կ'ըլլան պետական պաշտօնատարներ - յատկապէս՝ գբօսաշրջութեան նախարարը: Փառատօնի վայրի մուտքին, անոնք կ'ընդունուին Հ.Մ.Բ.Մ.ի նուագախումբէն եւ աւանդական տարազ հագած երիտասարդուհիներէ: Այս առթիւ, բոլոր խանութները կը ներկայացնեն տեղական աւանդական արտադրութիւններ՝ քացախ, աղտոր, բովեկ, չորթան, խնձոր, խաղող, բուլակ:

Տեղի կ'ունենայ հագուստներու եւ ձեռային աշխատանքներու ցուցահանդէս-վաճառք:

*(Գանչասար, Հալէպ)*

*- Յօդուածը կը ներկայացնէ Քեսապի գաւառը՝ մօտիկ անցեալին:*

*o Քու բառերով, բերանացի ամփոփէ՝ առաջին կէտը՝ փարոսան եղանակ, ընկերամշակութային գործունէութիւն, փնտրեասկան գործունէութիւն...*

*o Եղէ՛ յօդուածին երկրորդ կէտի նիւթը, եւ կարդայէ ետք՝ նոյնպէս ամփոփէ՛ զեկուցումով մը:*

### Տեսարաններ Քեսապէն.- Բնութիւն եւ մարդեր





# ՈՐՍԻ

*Ահա՛ կը սկսինք մեր արելեւահայերէն հատուածներուն...: Եթէ արդէն ծանօթ չէիր հայերէնի այս ճիւղին, պիտի տեսնես, որ դժուար չէ. շուտով պիտի վարժուիս անոր: Զոս՝ Ռաֆֆիի «Կայծեր» վէպի գլխաւոր հերոս Ֆարիատը գտած է իր հին ընկերները: Միասին գացած են գիւղ մը, այցելելու քաջ լեռնական իշխանի մը՝ Որսորդ Աւոյին: Ֆարիատը վերագտած է Մարօն, անոր աղջիկը, իր մանկութեան ընկերուհին: Վարագի մը դէմ քաջաբար կռուելով՝ ան պիտի շահի ընկերներուն ու Որսորդ Աւոյին համարումը, եւ մանաւանդ՝ Մարոյին սիրտը:*

1. Միւս օրը ուշ գարթնեցի: Արագ հագնուեցի եւ դուրս եկայ: Գեղեցիկ էր լեռնային առաւօտը: Ծննդուկները կշկշում էին ծառերի վրայ: Բակում հաւերն ախորժակով քաղում էին գետնից հատիկները, որ ցրում էր Մարօն:

Ես առաջին անգամ նկատեցի, որ Աւոյին տնակը, թէ իր շինուածքով եւ թէ մաքրութեամբ, համարեա՛ մի պալատ էր՝ գիւղի միւս խրճիթների հետ համեմատած:

2. Ինձ տեսնելով, Մարօն մօտ վազեց հեզնող ժպիտով.

- Տե՛ս, նրանք գնացին, քեզ այստեղ թողեցին: Ի՛նչ ծոյլ տղայ ես... Այսքան էլ կը քնե՞մ... մի օր եւ կէս ճամբայ է եկել, յոգնե՛լ է...: Ես ոտով մինչեւ Սուրբ Բարթողիմէոս գնացի. ինչքան պապան ասաց՝ ձի չնստեցի: Ողջ գիշերն էլ պարում էի... Ա՛խ, ի՛նչ լաւ էր այն գիշերը, Ֆարիատ. ափսո՛ս որ այնտեղ չէիր...

Որքան էլ հաճելի էր լսել Մարոյից իր ուխտագնացութեան<sup>2</sup> ուրախ պատմութիւնը, ես անհամբերութեամբ նրա խօսքը կըտրեցի, հարցնելով՝ թէ ո՛ր գնացին տղաքը եւ ինչո՞ւ ինձ թողեցին:

Նա ասաց, թէ անոնք, տեսնելով որ ես քնած եմ, գնացին որսի: Նրանք Մարոյին պատուիրել էին ինձ յայտնել, թէ կարող էի գտնել նրանց Խանասարի ձորի մէջ:

3. - Գու մի բան չե՞ս ուտի. ճանապարհը երկար է մինչեւ Խանասարի ձորը...,- հարցրեց Մարօն. ու շտապ աւելացրեց.- ես հիմա կաթը տաքացրի. ու վրայի սերը քեզ համար պահեցի...

## ԲԱՆԱԿՆԵՐՔ

- Փնտռէ՛ իմաստը.-
- գարթնել - կիրճ
- պարկերացնել
- երկիւղ - ժանիք
- անընդունակութիւն

## ՄԱՍ ԱՌՄԱՍ

2ա. Հոս արդէն՝ Մարօն ի՞նչ նկարագիրով աղջիկ մը կ'երեւի մեզի:

2բ. Բացատրէ՛ Ֆարիատի անհամբերութիւնը. ան ինչո՞ւ կը կտրէ Մարոյին խօսքը ուխտագնացութեան մասին:

Անոր ո՞ր տեղեկութիւնը պիտի գոհացնէ զինք:



- Ինչո՞ւ «սերը քեզ համար պահեցի...»  
- Մենք հին ընկերներ ենք... Այնպես չէ՞, Ֆարհատ:  
- Այո, բայց ես այսպես չէի պատկերացնում մեր հանդիպումը: Մտածում էի՝ ինձ որ տեսնես, կ'ասես. «Դու իմ ընկերը չես. դու ինձ ծեծում էիր, երբ երեխայ էի»...»

- Ի՞նչ անենք, ես էլ Մարիամ քրոջդ էի ծեծում... Բայց Մագ-թաղ քրոջդ շատ էի սիրում...

Վաղենի<sup>3</sup> յիշողութիւնները զարթնեցրին նրա մէջ տխուր զգացմունքներ, եւ պայծառ երեսը մռայլուեց:

- Օ՛, ես մոռացայ նախաճաշիկը...,- ասաց, եւ վազեց խոհանոց:

4. Նախաճաշից յետոյ, եւ վերցրեցի հրացանս եւ դուրս ելայ:

- Դու ճանապարհը չես իմանում,- ասաց Մարօն:

- Չեմ իմանում, բայց կը գտնեմ:

- Դժուար է: Ես քեզ կը հասցնեմ մինչեւ «Ծակ-քարը». այնտեղից ուղիղ ճանապարհ կայ մինչեւ Խանասարի ձորը:

Ճամբայ ելանք: Մարօն հագած ունէր մի պարզ, գունազեղ զգեստ. նրա սեւ գանգուրները ծածանում էին թեթեւ քամուց: Որքա՛ն սիրուն էր լեռնական աղջկայ նրա կազմուածքը, որքա՛ն ինքնավստահութիւն կար նրա համարձակ շարժումների մէջ, որքա՛ն կեանք կար նրա մեծ, սետրակ աչքերի մէջ...

Մի նեղ շաւիղ<sup>4</sup> տանում էր դէպի «Ծակ-քարը», անդադար բարձրանալով եւ իջնելով: Ճանապարհը Մարոյի համար սովորական լինելով, նա չէր զգում երկարութիւնը: Իսկ ես համարեա թէ յոգնեցի:

5. Հասանք մի ճիւղատրում: Այնտեղ Մարօն այնպիսի ճշդութեամբ նկարագրեց ճանապարհը, որ ես համոզուեցի՝ աչքերս խփած<sup>5</sup> կարող եմ գնալ:

Մարօն, կանգնած «Ծակ-քարի» գլխին, հետեւում էր:

Յափշտակուած բնութեան գեղեցկութիւնով՝ ես շարունակում էի իմ ուղին: Ընկել էի ինքնամոռացութեան<sup>6</sup> մէջ. մի տպաւորութիւն էր միայն մնացել իմ մտքում՝ Մարոյի գեղեցիկ պատկերը...

6. Մտածումների մէջ տարութեռում<sup>7</sup>, ես բոլորովին մոռացել էի Մարոյի պատուէրը ճանապարհի մասին: Ես հասկացայ,

3. Մարօն եւ Ֆարհատը հինէն ծանօթ են: Ո՞ր մանրամասնութենէն կը հասկնանք արդէն, որ Մարօն ուրախ է մանկութեան ընկերը վերագտնելուն համար:

4. Ֆարհատի համար՝ Մարօն ինչո՞վ գրաւիչ կ'երեւի: Աւելի վեր մեր տեսած Մարոյի նկարագիրը կը հաստատուի՞ հոս. ի՞նչ նոր գիծեր կը տեսնենք իր մօտ:

6. Բացատրէ՛ Ֆարհատի

որ մոլորուած են միայն այն ժամանակ, երբ իմ առջեւ բացուեց մի ահագին կիրճ, որից անցնել անհնար էր:

Ես բոլորովին շփոթուեցի:

Արեւն արդէն սկսել էր թեքուել դէպի արեւմուտք. երեկոյեան ցուրտը դառնում էր անտանելի: Ջգում էի յոգնածութիւն ու քաղց<sup>8</sup>: Մարօն ասում էր, թէ կը հասնեն որսորդութեան տեղը կէսօրից երկու ժամ անցած: Իսկ այժմ համարեա երեկոյ էր...

Արագ բարձրացայ մերձակայ բլուրի գագաթը. այնտեղից տեսայ մի նեղ տափարակ, որի վրայ նկատելի էին սեւ կէտեր. արածող անասուններ եւ հովիւներ՝ արդեօք...: Բայց կէտերը շարժուն չէին, այլ տափարակի վրայ կպած թուփեր:

Այժմ ի՞նչ պէտք էր անել. ես բոլորովին ընկայ յուսահատութեան մէջ: Երկիւղ չունէի որ գիշերը բացօթեայ կը մնամ լեռների մէջ. զինուած էի: Միայն ամօթ էի զգում. հպարտութիւնը տանջում էր ինձ: Ամօթ՝ Մարոյից, որ այնպէս յիմարաբար վարուեցի նրա խորհուրդների հետ: Ամօթ իմ ընկերներից, որոնք առաջին քայլից կը նկատէին իմ անընդունակութիւնը...

7. Յանկարծ լսելի եղաւ մի խուլ որոտում. հետեւեց երկրորդը, երրորդը: Այժմ պարզ որոշեցի, թէ հրացանի ձայն էր: Իսկ կրակողները... Ընկերներս չէին կարող լինել. իմ գտնուած տեղը շատ հեռու էր Խանասորի ձորից: Բայց ինձ համար նոյն էր. ով եւ լինէր, ես միայն ուրախ էի, որ կը հանդիպեմ մարդկանց:

Սկսեցի առաջանալ դէպի այն կողմ, որտեղից լսելի եղան ձայները: Այժմ պարզ լսում էր շների խառն աղաղակը:

Բայց մինչեւ նրանց հասնելը, որոտաց մի կռնչիւն, եւ տեսայ՝ ինձնից քսան քայլ հեռու վագում էր մի ահագին վարագ<sup>9</sup>: Հրացանն ուսիցս վար բերելը եւ արձակելը մի վայրկեանի գործ եղաւ:

Գնդակը թէւ դիպաւ նպատակին, բայց մահաբեր չեղաւ. կենդանին, ամենեւին չզգալով վերքի ցաւը, դարձաւ դէպի ինձ: Յարձակումը այնքան շուտափոյթ<sup>10</sup> եղաւ, որ միջոց չտուեց կրկին լցնել հրացանը:

Վայրկեանը ճգնաժամային<sup>11</sup> էր. վարագը արդէն արհունոտ աչքերով մօտեցել էր ինձ: Մի կողմ նետեցի հրացանը, եւ դաշոյնս խրեցի նրա կողքին: Նա արձակեց մի սարսափելի հառաչանք, բայց փորձեց գործ դնել իր ցցուած ժանիքները: Ինձ

զգացածները քու բառերով. ճշդէ՛ ի՞նչն է զինք նեղացնող, «յուսահատութեան մէջ» ձգող պարագան:

7. Ֆարհատը ի՞նչ կեցուածք կ'ունենայ վարագին հանդէպ: Չինք քիչ մը ճանչցած ըլլալով՝ կը սպասէի՞ր իրմէ այդ կեցուածքը. որո՞նք են իր մէջ յայտնուող նկարագիրի նոր գիծերը:



*Հսկող պահակներ՝ Սիւնեաց  
լեռնագագաթներուն վրայ, Խաչիկ գիւղ  
(հին անձանօթ լուսանկար, 1911)*

յաջողուեց մի ուսումով անցնել յետսակողմ<sup>12</sup>, եւ մի երկրորդ ուժգին հարուածով պատառոտել նրա փորը:

Մինչ նա շարունակում էր սարսափելի ուժով պատերազմել, ինձանից ոչ հեռու որոտաց մի հրացան: Գնդակը ուղղակի անցաւ վարազի գլխի միջից. նա մի քանի անգօր շարժումներ գործեց, ու տապալուեց գետին...

8. Ես յետ նայեցի... Տեսնում եմ Մարօն, իմ հրացանը ձեռին կայնած՝ ժպտում է...

Ո՛վ կարող է պատմել իմ ուրախութիւնը: Բոլորովին թաթախուած արեան մէջ, վազեցի նրա մօտ, եւ գրկելով իմ ազատիչին՝ պինդ սեղմեցի նրան իմ կրծքի վրայ:

Մարօն պատմեց, թէ բաժանուելով ինձանից՝ իսկոյն չդարձաւ դէպի գիւղը, այլ բարձրանալով «Ծակ-քարի» գլխին, այնտեղից հետետում էր իմ ընթացքին:

Նա տեսաւ, դեռ ճանապարհի կէսին չհասած՝ ես շեղուեցի...: Նա իսկոյն վազեց իմ յետեւից. մի քանի ժամ ինձ կորցրեց տեսողութիւնից, եւ երկար որոնելով<sup>13</sup> կարողացաւ գտնել այնտեղ, ուր յայտնուեց գազանը: Եւ իմ հրացանի առաջին արձակումից յետոյ, երբ ես մի կողմ նետեցի զէնք եւ փամփուշտ, նա օգտուեց

դրանից, իսկոյն լեցրեց հրացանը նոյն փամփուշտով, իսկ հետեւանքը - արդէն յայտնի էր:

9. Մենք խօսակցութեան միջոցին չէինք նկատում, որ չորս հոգի, կանգնած բլուրի գլխին, դիտում էին տեսարանը սկզբից:

Նրանք մօտեցան մեզ. որսորդ Աւօն էր, եւ իմ երեք ընկերները: Նրանցից էինք մենք խլել գազանին զգետնելու<sup>14</sup> պատիրը:

Ծերունին գրկեց մեզ, ու համբուրելով՝ ասաց.

- Ապրէ՛ք. դուք երկուսդ էլ արժանի էք Որսորդ Աւոյի զաւակները կոչուելու...

1. \*Համարեա.- Գրեթէ: (Աստղանիչ՝ արեւելահայերէն բառերուն:)
2. Ուխտագնացութիւն.- Տօնական առիթով վանք կամ եկեղեցի այցելութիւն:
3. \*Վաղեմի.- Հին: 4. Շաւիղ.- Նեղ ճամբայ:
5. \*Խփած.- Գոցած: 6. Ինքնամոռացութիւն.- «Ինքզինք մոռցած» վիճակ:
7. \*Տարութերուել.- Օրօրուիլ, ճօճիլ (հոս՝ մտքով):
8. \*Քաղց.- Անօթութիւն: 9. Վարագ.- Վայրի խոզ:
10. Շուտափոյթ.- Արագ: 11. Ծգնաժամային.- Կարեւոր, վտանգատու:
12. Յետսակողմ.- Ետեւի կողմ: 13. Որոնել.- Փնտռել:
14. Զգետնել.- Տապալել, պարտութեան մատնել:

9. Ի՞նչ կը նշանակէ՝  
«Նրանցից էինք մենք  
խլել գազանին  
զգետնելու պատիրը»:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ

- Երկու սինակի տակ ամփոփէ՝ Ֆարհատի եւ Մարոյի վերատեսութեան այս առաջին օրը՝ սկիզբէն մինչեւ վերջ, անցնելով յաջող եւ անյաջող պահերէ: Ո՞վ պիտի արտայայտէ անոր յաջող ելքը, ո՞ր խօսքով:



### ԼՍԱ-ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆԳ. «ՀԱՅՐԵՆԻ ԱՐԲԻՐ»Ի ԳՐԱԴԱՐԱՆ




Րաֆֆիի գործին աւելի ծանօթանալու, անոր հետ մտերմանալու առիթ մը ունիք. կարդալ ձեր դասագիրքի «Գրադարան»ի «Կայծեր»ը, զոյգ պզտիկ հատորներով: Ու կը հասկնաք, թէ գրական գործերէ՛ ինչպէ՛ս գաղափարական նոր աշխարհներ եւ հաւաքական մեծ շարժումներ կրնան ծնիլ:

Հոս քովը՝ Րաֆֆիի Թիֆլիսի բնակարանի մուտքին՝ վերջերս տեղադրուած յուշատախտակը, հայկական նախածեռնութեամբ, վրացական պետութեան հետ գործակցաբար:

### Րաֆֆի (Յակոբ Մելիք-Յակոբեան, 1835-1888)

Ծնած է հիւսիսային Պարսկաստան (Փայաջուկ գիւղ): Ուսումի տարուած է Թիֆլիս. բայց հորը գործի ձախողութիւններուն պատճառով՝ շուտով ստանձնած է բազմանդամ ընտանիքը ապրեցնելու հոգը: Փորձած է զանազան գործեր, նաեւ ուսուցչութիւն՝ հայրենի գաւառին մէջ: Բայց՝ զարգացած



անձ՝ հալածուած է ու հարկադրուած՝ հոնկէ հեռանալու: Ապրած է Թիֆլիս, ուր շուտով պիտի սկսէր գրել իր վէպերը:

1870ին՝ շրջած է արեւմտեան Հայաստան, հաւաքած է նիւթեր: Իր հաւաքած տեղեկութիւնները սկսած է գործածել իր վէպերուն մէջ: Ասոնք կան պատմական են («Սամուէլ», «Դաւիթ Բէկ»), կան կը նախագուշակեն հայութեան ազատագրական պայքարը («Կայծեր», «Խենթը»): Միշտ ալ՝ Րաֆֆիի նպատակը մէկ է - պատմական կամ երեւակայական օրինակներով արթնցնել քաղաքական գիտակցութիւն եւ քաջութիւն:



## ԼԵԶՈՒԱԿԱՆ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

### ԲԱՌԱՄԹԵՐՔ

1. Բերանացի բացատրէ՝ իւրաքանչիւր բառ, յետոյ աւելցո՛ւր նախադասութեան մէջ՝ ըստ իմաստի.-

- սէր → .....
- սեռ → .....
- սեր → .....

ա. Որոշ բոյսեր, կենդանիներու նման, արական կամ իգական ..... ի կը պատկանին:

բ. Կաթին ..... ը չեն սիրեր. բայց մածուկինը՝ շա՛տ կը սիրեն:

գ. Ի՛նչ ..... է ասիկա՝ ձեր երկուքին միջեւ:

### ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆԻՆ

2. Ըսէ՛ ու գրէ՛ արեւմտահայերէն.-

- Գոյականի կապուած ձեւեր.-

- o տղերքը → .....
- o սենեակում → .....
- o ծառերի վրայ → .....
- o գլխին → .....

- Դերանունի...

- o նրանք → .....
- o նրանց → .....
- o նա → .....
- o ինձ → .....

- Բայի...

- o գարնեցի → .....
- o հազնուեցի → .....
- o տաքացրի → .....
- o պատկերացնում են → .....
- o պարում էի → .....
- o սկսել էր → .....

### Նախադասութիւններ

ա. Դու մի բան չե՞ս ուտի,- հարցրեց Մարօն: → .....

բ. Ողջ գիշերն էլ՝ պարում էի: → .....

գ. Նրանք գնացին, քեզ այստեղ թողեցին: → .....